ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 օգոստոսի 2011 թվականի N105-Ա

ԱՆԳԻՆ ՆԻԳՈՅԱՆԻՆ <ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ> ՊՈԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ.մարտի 4-ի <Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին> N 319- Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը Անգին Ռազմիկի Նիգոյանին 2011 թվականի օգոստոսի 2-ից նշանակել <Պառավաքարի միջնակարգ դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. օգոստոսի 2
ք. Իջևան